

Ապարանի բնապահպանական
տեղեկատվության հասարակական
կենտրոն



**Public Environmental
Information Center of Aparan**

Հասցե. ՀՀ, 3103, ք.Ապարան, Բաղրամյան 26
Հեռ./Ֆաքս +/ 0252/ 6 23 60
Էլ.փոստ aarhusaparan@mail.ru
info_aparan@aarhus.am

Address Bagramian 26, Aparan, 3103, RA
Tel./Fax +/ 252/ 6 23 60
E-mail aarhusaparan@mail.ru
info_aparan@aarhus.am

ԱՊԱՐԱՆԻ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

«Աջակցել կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը
լուծելու շրջակա միջավայրին առնչվող հարցերը»

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբեր
2016թ.



1. Կենտրոնի 2016թ. ղեկտեմբեր ամսվա գործունեության ամփոփ նկարագիրը

- ✓ Դեկտեմբեր ամսվա ընթացքում կենտրոնի փորձագետն շարունակել է աշխատել Ապարան համայնքի բնապահպանական խնդիրների և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ զեկույցի վրա:
Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման 5-ամյա ծրագրի կազման աշխատանքներին աջակցելու նպատակով Օրհուս կենտրոնի համակարգողի կողմից կատարվել է համայնքի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրում, իրավիճակի վերլուծություն, ներկայացվել են առաջարկություններ շրջակա միջավայրի խնդիրների լուծման և իրավիճակի բարելավման ուղղությամբ:
- ✓ Վերը նշված հարցերը քննարկվել են փորձագետների խորհրդի անդամների, համայնքի ղեկավարության, քաղաքապետարանի կոմունալ ծառայության, գյուղատնտեսության և բնապահպանության, միջհամայնքային կապերի գլխավոր մասնագետների հետ, որոնց կողմից կատարվել են լրացումներ:
- ✓ Համայնքի բնապահպանական խնդիրները քննարկվել են համայնքի հասարակայնության ներկայացուցիչների հետ և դրանց բարելավման ուղղությամբ նրանց արված առաջարկություններն ներառվել են համայնքի բնապահպանական խնդիրների և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ զեկույցում:
Ապարան համայնքի բնապահպանական խնդիրների և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ զեկույցը կցվում է հաշվետվությանը:
- ✓ Ապարան համայնքի բնապահպանական խնդիրների և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ Փորձագիտական զեկույցը ներկայացվել է համայնքի ղեկավարներին.
- ✓ Ամսվա ընթացքում կենտրոնի կողմից իրականացվել է խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում կենտրոն դիմած գյուղակադեմիայի ագրոէկոլոգիայի ֆակուլտետի ուսանողներին Ապարանի տարածաշրջանում էկոլոգիական լարվածություն առաջ բերող գործոնների, էկոլոգիական անվտագության և ռիսկայնության աստիճանի և իրավիճակի օպտիմալացման միջոցառումների, ոռոգման նպատակով օգտագործվող հոսքաջրերի և կոյուղաջրերի ազդեցության հետևանքների, ինչպես նաև հողում, բույսերի մեջ ծանր մետաղների և այլ վնասակար նյութերի պարունակության վերաբերյալ:
- ✓ Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ուշադրության կենտրոնում են գտնվել հասարակության շրջանում բնապահպանական կրթության խնդիրները, հատկապես երիտասարդության շրջանում շրջակա միջավայրի վերաբերյալ պատասխանատու վարքագծի ձևավորման հարցերը: Կազմակերպվել է դասընթաց ավագ դպրոցի սովորողների, ուսուցիչների համար << Ամանորին կենդանի եղևնու տեղադրման ավանդույթի հետևանքները>> թեմայով:

Դպրոցի տնօրինությունը, ուսուցչական կոլեկտիվը և աշակերտները կարևորելով անտառի պահպանությունը, այս տարվա ամանորի դպրոցական հանդեսը որոշեցին անցկացնել իրենց ձեռքով պատրաստած արհեստական եղևնու շուրջ:

- ✓ Դեկտեմբեր ամսին կենտրոնի համակարգողը մասնակցել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի նախաձեռնությամբ, ՀՀ բնապահպանության նախարարության և «Տնտեսաիրավական վերլուծությունների կենտրոն» ՀԿ համագործակցությամբ տեղի ունեցած աշխատաժողովին, որը նվիրված էր ազգային օրենսդրությունում Օրհուսի կոնվենցիայի հիմնադրույթների արտացոլմանը և այդ համատեքստում շրջակա միջավայրի հարցերով արդարադատության մատչելիությանը:
- ✓ Ելնելով Կոնվենցիայի տեղեկատվության մատչելիության դրույթից, ինչպես նախորդ, այնպես էլ դեկտեմբեր ամսվա ընթացքում կենտրոնի կողմից իրականացվել է տեղեկատվության տարածում սոց. ցանցում Ապարանում համայնքապետարանի կողմից իրականացվող ծրագրերի՝ մասնավորապես գյուղատնտեսության զարգացման, ջրարբիացման համակարգերի ուղղությամբ և գյուղատնտեսական տեխնիկայի վերաբերյալ:

